ՕՎՍԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ
ՀՏԴ 091:821.19.0

ԳՐԱԿԱՆ ԺԱՆՐԵՐԸ 12-ՐԴ ԴԱՐԻ ՁԵՌԱԳԻՐ ՄԱՏՅԱՆՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր. ձեռագիր, ժանր, պատմագրություն, թուղթ, ներբող, հիշատակարան, գրիչ, վանք:

Ключевые слова: рукопись, жанр, историография, послание, ода, колофон, переписчик, монастырь.

Keywords: manuscript, style, historiography, epistle, ode, colophon, scribe, monastery.

Գրական ստեղծագործությունները իրարից տարբերվում են ոչ միայն իրենց պատմական ու գեղարվեստական բովանդակությամբ, այլև բուն իրենց տիպով՝ տեսակներով: Գրական տեսակներ և ժանրեր հասկացությունները հաճախ գործածվել են որպես հոմանիշներ: Հայտնի է, որ յուրաքանչյուր գրական ժանր ունի իրեն հատուկ կառուցվածքը, օրինաչափությունը, իրական երևույթների գեղարվեստական արտացոլման յուրահատուկ եղանակները: Իսկ թե ի՛նչ գրական ժանրեր են ընդգրկված 12-րդ դարից մեզ հասած ձեռագրերում, կիմանանք այս հետազոտության ընթացքում: Մաշտոցի անվ. Մատենադարանում է պահվում 12-րդ դարից մեզ հասած շուրջ 68 ձեռագիր[1], որոնցում ընդգրկուած են տարբեր ժանրերի գործեր:

Այսպես, պատմագրությունը հայ գրականության հնագույն ժանրերից է, այն ձևավորվել է դեռևս հինգերորդ դարում: Այն մի համադրական ժանր է, որն իր մեջ է ամփոփում պատմականն ու գեղարվեստականը: 5-րդ դարից մեզ հասած առաջին պատմությունը Ագաթանգեղոսի երկն է, այն կոչվում է «Հայոց պատմություն», որը նվիրված է քրիստոնեության մուտքին և մեր երկրում այն որպես պետական կրոն հռչակելուն: 12-րդ դարի հ^{մր} 5583 ձեռագրով մեզ է հասել Ագաթանգեղոսի Պատմությունը: Տարբեր ձեռագիր-ժողովածուներով մեզ են հասել բազմաթիվ պատմություններ. այսպես՝ հ^{մր} 1888 ձեռագրում տեղ է գտել Եղիշեի պատմությունը հետևյալ խորագրով.

[1] Ձեռագրերի համարները՝ 3906՝ Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական, 5583՝ Ագաթանգեղոս, Պատմություն, 1568, 4035, 5939՝ Գրիգոր Նարեկացի, Մատեան Ողբերգության, 1890, 975, 948, 468, 777, 1672, 1888, 1897, 2244, 5551, 5619, 6362, 9838, 5561, 5607՝ Ժողովածուներ, 3777, 7729, 3782, 1522, 9296՝ Ճառընտիր և այլն:

«Պատմութիւն սրբոյն Վարդանայ քաջի եւ հայոց սպարապետի եւ վկայի Քրիստոսի, յԵղիշայէ, սրբոյ Դաւթայ երիցուէ հայցեալ գրեաց»[2]: Հմր 948 ձեռագիրը Ճառընտիր է, որի ստացողը և գրիչը Յովհաննես քահանան է, այս ձեռագրի միջոցով մեզ են հասել. «Վասն Եփրեմի Ասորոյ», «Վասն կնոջն այրոյ», «Վասն Յովսեփայ բժշկի» խորագրերով պատմությունները[3]:

Հմր 1522 ձեռգիրը Ճառընտիր է, գրված Հովհանավանքում, գրիչը Հովհաննեսն է, ստացողը՝ Ռուբեն քահանան: Այս ձեռագրով 12-րդ դարում մեզ հասած պատմություններն են. «Պատմութիւն վարուց սրբոյն Յակովբայ Մծբնա հայրապետի, որ գրեաց Մեղիդէ աշակերտ Մարուգեի միայնակեցի»[4], «Պատմութիւն սրբոյն Բագրատայ Տոռոմոնի եպիսկոպոսի ի Սիկիլիդուոյ կղզւոջն»[5], «Պատմութիւն սրբոյն Կիպրիանոսի եպիսկոպոսի եւ Յուստինեա կուսի, եւ վկայութիւն նոցա»[6], «Պատմութիւն վասն անցից ի հարաւային ազգէն ի վերայ Հայոց, եւ վկայութիւն Վահանայ, որդւոյ Խոսրովու Գողթան տեառն»[7], «Պատմութիւն յաղագս Սրբոյ խաչին, որ Հացունեան կոչի, եւ թէ որպէս դարձաւ ի Պարսից աշխարհէն Խաչն աստուածընկալ եւ յայնժամ մասն ընկալեալ տիկնոջն»[8]:

Հմր 1890 ձեռագիրը ժողովածու է գրուած 1172 թվականին Կոշավանքում. գրիչը և ստացողը Դաւիթ կրոնավորն է: Ժողովածուն պարունակում է Եղիշեի պատմությունը՝ «Պատմութիւն սրբոյն Վարդանա քաջի եւ Հայոց սպարապետի եւ վկայի Քրիստոսի յԵղիշայէ, սրբոյ Դաւթայ երիցու հայցեալ գրեաց»[9], Թովմա Արծրունու պատմությունից՝ «Ի պատմութենէ Թովմայի վարդապետի»[10], եւ հետևյալ խորագրով պատմությունը «Պատմութիւն վարուց սրբոյն Յակովբա, զոր գրեաց Մելիքէ աշակերտ Մարուգէի միայնակեցի»[11]:

Գրիգոր Նարեկացուց մեզ հասած լավագույն և կարևորագույն ստեղծագործությունը, ինչպես գիտենք, «Մատեան ողբերգության» պոեմն է, որ կոչվում է նաև «Նարեկ»: 12-րդ դարի երեք առանձին ձեռագրերով մեզ է հասել Նարեկացու «Մատեան ողբերգութեան» աղոթամատյանը: Այսպես.

---

[2] Ձեռ. Հմր 1888, թերթ 3ա:
[3] Ձեռ. Հմր 948, թերթ 155ա-161ա:
[4] Ձեռ. Հմր 1522, թերթ 21բ:
[5] Նույն տեղում, թերթ 74բ:
[6] Նույն տեղում, թերթ 164բ:
[7] Նույն տեղում, թերթ 182բ:
[8] Նույն տեղում, թերթ 521բ:
[9] Ձեռ. 1890, թերթ 3ա:
[10] Նույն տեղում, թերթ 206բ:
[11] Նույն տեղում, թերթ 238ա:

հմր 1568 ձեռագիրը, որի թերթերը մագաղաթ են, պահվում է Մաշտոցի անվ. Մատենադարանում, գրվել է 1173 թվականին, ինչը հաստատվում է ձեռագրում առկա հիշատակարանով. «ԶՎարդան աստուածամերձ քահանայ, որ բարիոք ծերութեամբ հանգաւ ի Քրիստոս յիշեսջիք. թու[ին] ՈԻԲ. (1173)»[12], գիրը երկաթագրախառն բոլորգիր[13] է և միասյուն, հավանաբար ընդօրինակվել է Սկևռայում, գրիչն է Գրիգոր Սկևռացին, կասկածվում է, որ ծաղկողը նույնպես ինքն է, ձեռագրի ստացողն է Ներսես Լամբրոնացին[14]: Սա առաջին ձեռագիր մատեանն է, որով մեզ է հասել Նարեկացու երկը, այն օգտագործվել է Պ. Խաչատրյանի եւ Ա. Ղազինյանի քննական բնագրում, որպես A ձեռագիր: Այս ձեռագրում աղոթամատյանը այսպես է խորագրված՝ «Ասացեալ Մատեան ողբերգութեան Գրիգորի Նարեկեայ վանաց վանականի, հոգեմատեան հռետորի եւ Հայոց փիլիսոփայի»[15]: 12-րդ դարի մյուս ձեռագիրը, որով մեզ է հասել Նարեկացու երկը, հմր 4035-ն է. պահվում է Մաշտոցի անվ. Մատենադարանում, թերթերը թուղթ են, գրված է ուղղագիծ երկաթագրով[16] միասյուն, գրիչը համարվում է Գրիգորը, իսկ ստացողը՝ Կոստանդինը: Երրորդը՝ 5939 համարի ձեռագիրն է, գրված բոլորգրով, միասյուն, գրիչը համարվում է Մանուէն, ստացողը՝ Յուսիկը:

Ներբողը, որի ակունքները գալիս են դեռ Հին Հունաստանից, հայերեն նշանակում է գովեստ, գովք, գովասանք միջնադարում կրել է ներբողյան անունը: Ներբողի ժանրը հայ գրականության մեջ սկզբնավորվել է դեռ 5-րդ դարից, շարունակվել է միջնադարում: Առաջին ներբողագիր հեղինակներ են համարվել Մովսես Խորենացին և Դավիթ Անհաղթը: 12-րդ դարի ձեռագիր մատյաններով մեզ են հասել հետևյալները. «Գօշի Ներբողեան ի նոր վկայն Խոստրով» ներբողը՝ հմր 3777 ձեռագրով՝ գրուած 1185-1188 թվականներին՝ հավանական է, որ գրվել է Սաղմոսավանքում, գրիչը, կազմողը, ստացողը համարվում են Մարկոս, Մխիթար եղբայրները, ստացող է համարվում նաև Ստեփանոսը: Մյուսը՝ 3782 համարի ձեռագիրն

---

[12] Ձեռ. հմր 1568, էջ 132ա:

[13] Հայկական գրատեսակներից, որը հատուկ է երկաթագրից բոլորգրին անցման շրջանին, այն կարելի է անվանել նաև անցման գիր – Օվսաննա Խաչատրյան:

[14] Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց, հտ. Ե, Երեւան 2009, էջ 497-506:

[15] Ձեռ. հմր 1568, թերթ 8ա:

[16] Այն որպես գրատեսակ սկսել է գործածվել դեռևս 8-9-րդ դարերից. այս տառատեսակը բուն մեսրոպյան բոլորգիծ երկաթագրից, որի տառաձևերը կորություն ունեին, տարբերվում է ուղղագիծ անկյուններով և նախկին գրին զիջում է իր չափերով: Ավելի մանրամասն տե՛ս Աբրահամյան Ա. Գ., հայոց գիր և գրչություն, Երևան, 1973, էջ 61-70:

է, որով մեզ են հասել բազմաթիվ ներբողներ (Բարսեղ, Դաւիթ, Մովսես Խորենացի, Եփրեմ, Զաքարիա կթող., Ոսկեբերան): Ներբողի գլխավոր հատկանիշն այն է, որ այն բարի գործերի, գեղեցիկ արարքների գովերգումն է. «Ներբողը բարի գործերի, առաքինության, գեղեցիկ հատկանիշների գովերգությունն է»[17]:

Թուղթը, որպես գրական տեսակ ձևավորվել է 5-րդ դարում: Թուղթ նշանակում է նամակ, որը նպատակաուղղված է. «Թուղթը ունի նաև հրովարտակ իմաստը, վերջին հաշվով հրովարտակը նույնպես նամակ է՝ միայն ոչ անձնական, այսինքն՝ կոնկրետ մի մարդու ուղղված…» [18] : Ահա 12-րդ դարում հմր 3906 ձեռագրով մեզ է հասել Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրական»-ը՝ գրված 1169-1170 թթ., բոլորգրով, միասյուն, հմր 1522 ձեռագրով՝«Թուղթ առ Ներսիսէ եղբար տեառն Գրիգորիսի կաթողիկոսի Հայոց. Պատասխանի թղթոյն Գեորգայ արեւելյան եպիսկոպոսի, առաջնորդի Սուրբ ուխտին Հաղբատա, յաղագս հետազոտելոյ առ ի ստուգութիւն զՊատմութիւն երանելոյ նահատակի սրբոյն Սարգսի զաւրավարին Մեծի»[19], հմր 3782՝ Ճառընտիր ձեռագրով մեզ են հասել բազմաթիվ թղթեր (Գր. եպս. Արծրունեաց, Դիոն. Արիսպագացի), հմր 1890 ժողովածու ձեռագրով հետևյալները՝ «Ստորոգութիւն պատմութեան սրբոյն Սարգսի զաւրավարի, թէ ուր վկաեալ, կամ որպէս թարգմանեալ բերաւ ի մեզ: Թուղթ Ներսիսի եպիսկոպոսի՝ եղբաւր Գրիգորի եւ կաթողիկոսի Հայոց՝ պատասխանի թղթոյն Գեորգայ արեւելեան եպիսկոպոսի, առաջնորդի սրբոյ ուխտին Հաղբատայ՝ յաղագս հետազաւտելոյ առ ի ստուգութիւն զպատմութիւնս երանելոյ նահատակին սրբոյն Սարգսի»[20]:

Միջնադարում գոյություն ունեցող յուրօրինակ գրական երևույթներ են ձեռագրերի հիշատակարանները, որոնք արձակ կամ չափածո ձևով են հանդես գալիս և տեղեկություն են հաղորդում տվյալ ձեռագրի գրչության վայրի, թվականի, ձեռագրի գրչի, ստացողի, ծաղկողի մասին, օրինակ՝ կարդալով հմր 1568 ձեռագրի հիշատակարանը՝ հասկանում ենք, որ տվյալ ձեռագրի ստացողը Ներսես Լամբրոնացին է. «Ստացող սորա զՆերսէս աստուածամերձ քահանայ յիշեսջի՛ք եւ զգրիչս՝ աղաչեմ»[21], կամ կարդում

[17] Արշալույս Ղազինյան, Ներբողը հայ հին գրականության մեջ (տե՛ս Հայ միջնադարյան գրականության ժանրեր, էջ 130):

[18] Դոլուխանյան Աելիտա, Հայ միջնադարյան գրականության հիմնական ուղղություններն ու ժանրերը, էջ 35:

[19] Ձեռ. 1522, թերթ 296բ:

[20] Ձեռ. 1890, թերթ 211ա:

[21] Ձեռ. 1568, թերթ 118բ:

ենք հետևյալ հիշատակարանը և իմանում գրչի անունը՝ «Զողորմելի գրիչս Գրիգոր աղաչեմ յիշել ի Տէր»[22]:

Հիշատակարանների բազմազանությամբ և հարստությամբ հայերեն ձեռագրերը զգալի տարբերվում են այլ ժողովուրդների ձեռագրերից:

Օ. Խաչատրյան

Գրական ժանրերը 12-րդ դարի ձեռագիր մատյաններում

Ամփոփում

Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում են 12-րդ դարից մեզ հասած 68 ձեռագրեր: Հոդվածում ներկայացվում են, թե միջնադարյան գրականության ինչ ժանրեր կան այդ ձեռագրերում: Նրանցում կան պատմություն, թղթեր, Գր. Նարեկացու Մատյանը, ներբողներ, կրոնական երկեր, հիշատակարաններ, ծիսական քերթվածներ:

О. Хачатрян

Литературные жанры в рукописях XII века

Резюме

В Ереванском Матенадаране имени Месропа Маштоца хранятся дошедщие до нас 68 рукописей XII века. Статья представляет средневековые литературные жанры, имеющиеся в этих рукописях. В них встречаются исторические труды, послания, Книга скорбных песнопений Григора Нарекаци, оды, религиозные трактаты, колофоны, ритуальные произведения.

O.Khachatryan

Literary Styles in Manuscripts of the 12th Century

Summary

The collection of the Mashtots Matenadaran of Yerevan includes 68 manuscripts preserved from the 12th century. The article presents medieval literary styles which can be found in these manuscripts. Those are historical works, epistles, the Book of Lamentation by Grigor Narekatsi, odes, religious treatises, colophons, ritual works.

[22] Նույն տեղում, թերթ 234ա: